600.0259.11.07.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2012 թվականի N259Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը, 25-րդ, 30-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 18-ի N9 որոշման՝
   1) 1-ին կետով «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0004 լիցենզիայի պայմաններում (այսուհետ՝ N0004 լիցենզիայի պայմաններ) կատարել հետևյալ փոփոխությունները.

   ա. N0004 լիցենզիայի պայմանների 6.9 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «6.9 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով, ինչպես նաև տեղեկատվություններ՝

   1) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
   2) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
   3) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման Հանձնաժողովի հետ:».

բ. ուժը կորցրած ճանաչել N0004 լիցենզիայի պայմանների 6.12 և 6.18 կետերը.

2) 3-րդ կետով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ էլեկտրական էներգիայի հաղորդման N0006 լիցենզիայի պայմաններում (այսուհետ՝ N0006 լիցենզիայի պայմաններ) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. N0006 լիցենզիայի պայմանների 5.9 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.9 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով, ինչպես նաև տեղեկատվություններ՝

1) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
2) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
3) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման Հանձնաժողովի հետ:».

բ. ուժը կորցրած ճանաչել N0006 լիցենզիայի պայմանների 5.12 և 5.19 կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
11 հուլիսի 2012թ.
ժամը 16^{00}